

## ԵԳԻՊՏՈՍԻ ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

### Ա. Գ. ԶԲՑԱՆ

Եգիպտոսի հայ թատերական արվեստը ծագել է մի միջավայրում, ուր սահմանվում էին անցյալի ավանդույթները, նշվում պատմական կարևոր տարելիցները։ Առանձին նշանակություն էր տրվում Վարդանանց պատերազմի տարեգարձին։ Հրապարակային տոնակատարություններից են եկեղեցական արարողություններից բացի, Կահիրեի և Ալեքսանդրիայի լավագույն սրահներում ընթագրվում էր «Վարդանանց պատերազմը» ազգային ողբերգությունը։ Հովհաննի Յին Կահիրեի թարեգործական ընկերության ակումբում տոնվում էր Աղջային սահմանագրության օրը։ Արտասանվում էին Հայրենասիրական ճառեր, տեղի էին ունենում հրախաղեր, նվազախմբի ուղեկցությամբ կատարվում էին սահմանադրությանը նվիրված երգեր։ Գաղութի թատերական շարժման անքակտեի մասն էր կաղմում գալորդական թաարոնը։ Կրթական օշախներում թատերական կուլտուրան պատվաստելու գործին նպաստեց այն հանգամանքը, որ գաղթօգափի երկու առաջնակարգ՝ Կահիրեի Գալուստյան և Ալեքսանդրիայի Պողոսյան վարժարաններին տրաստագրեցին նոր՝ արգիական և հարմարավետ շենքեր։ Դպրոցների ղեկավարությունը, ձգտելով սաներին գաստիարակել հայրենասիրական ոգով, ի գեմս թատրոնի գտավ այդ նպատակն իրականացնելու լավագույն միջոց, երկու վարժարաններում էլ կառուցվեցին ընդարձակ հանգիստարաններ։ Կարճ ժամանակ անց, Կաղանգի, եկեղեցական և աղքացին տոների կապակցությամբ սկսեցին տրվել թատերականացված հանգեսներ, որոնց ընթացքում ներկայացվում էին զավեշտներ, արտասանվում հայրենասիրական քերթվածներ, Համայնքի թատերական արվեստի ձեավորմանը նպաստեցին նաև արեմտահայ և արեելահայ բեմի վարպետների հյուրախաղերը եղիպատում։ Հետագայում, երբ թատրոնն իր կայուն տեղը գրավեց եգիպտահայ մշակութային կյանքում, տեղի են յուրախաղերի եկած գերասանների հաջորդական կամ համառեղ ելութերը գարձան այստեղի թատերական շարժման ընտրող կողմերից մեկը, որն իր կնիքը բողեց թատերական արվեստի ողջ ընթացքի ու ընույթի վրա։

Սերովք Պենկյանի օպերետային խորմքը եգիպտասոս հյուրախաղերի եկած հայկական առաջին պրոֆեսիոնալ թատերախորմը էր։ Հունաստանում ունեցած հացողությունից հետո, որին նպաստեց նաև խմբի կաղմում հանգես եկող Սիրամույշը, Ս. Պենկյանը, գրեթե նույն խաղացանկով, 1885 թ. հունվարին եկավ եգիպտոս։ Մինչև գարնան վերջը անող հյուրախաղերի ընթացքում օպերետային խորմքը եգիպտահայ թատերասաներ հասարականությանը ներկայացրեց իր ողջ խաղացանկը («Լեբերիդի Հոբեկոր աղաս», «Քեհյա», «Ալիք», «Ժիրոֆլե-Ժիրոֆլյա», «Մագամ Անգո», «Եկեղեցկոհի Հեղինե», «Օրփիասը գժիխում», «Ճաղացպանի աղջիկը» և այլ օպերետներ ու գավեշներ), որտեղ հայկականին դուգընթաց, համարժեք ժողովրդականություն էին վայելում նաև ֆրանսիական օպերետները<sup>2</sup>, 1885 թ. ամռան վերջերին Ս. Պենկյանի թատերախորմը մեկնեց Կոստանդնուպոլիս, մեկ ան-

1 Տե՛ս Հ. Ա. Թափուզյան, Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805—1952), Երևան, 1978, էջ 202—203.

2 Տե՛ս Ա. Ալպոյան Հյան, Արարական Միացյալ Հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը, Կադիք, 1880, էջ 215.

գամ ևս Եղիպատոս այցելելու նպատակով։ Նախօրոք վարած բանակցությունների և նուրար փաշտայի միջնորդոթյան շնորհիվ, 1887 թ. Կահիրենս, Հյուրախաղերի ժամանակ Ս. Պենկլյանի գերասանախմբի առջև բացվեցին խղի-վական օպերայի դոները։ Հայ գերասաններն արժանացան փոխարքա Թագիկի հովանավորությանն ու առատ նվիրատվություններին։ Օպերետային խմբի հյուրախաղերը, այսպիսով, անցնում էին բարենպաստ մթնոլորտում, որը, սակայն, կտրուկ փոխվեց Ս. Պենկլյանի և գերասանների միջև ծագած միջադեպի պատճառով։ Մեծարարուսանները, որոնք մինչ այդ ձգտում էին օդտակար լինել թատերախմբին, սկսեցին բացահայտորեն երես թեքել խղիվական օպերայից։ Խումբը կաղմալուծվեց, գերասանները ժամանակից շուտ վերադասն Կոստանդնուպոլիսի։

Կահիրենի հանդիսանական, սակայն, վարժվել էր թատերական ներկայացումներին։ Ս. Պենկլյանի խմբի հյուրախաղերից հետո թատերական ասպարեզը արամագրովեց կիսապրոֆեսիոնալ խմբերին։ Սրանք պիեսները ըեմադրում էին հապճեպ և անփուլթ, և, ինչպես կարելի է ենթադրել, «հասարակության կաղմայից չէին քաջալերվեր»<sup>4</sup>։

Այսուհետեւ, համայնքում նշմարվեց սեփական թատրոն ստեղծելու միտում, ուրվագծվեցին թատերական արվեստի դորդացման ուղիները։ Պասսական ճակատագրի ըերուանով հայ թատերական կյանքի կենտրոնը նույնպես Կոստանդնուպոլիսից տեղափոխվեց Կահիրեն, նաև Ալեքսանդրիա, ուր օտարաղղի տրվեստի դարգացման համար կային ավելի նպասաավոր այլմաններ։ Փորձառու արվեստագետների առկայությամբ այս ամենը կարող էր գառնալ թատերական լիարժեք կյանքի սկիզբ։

**XIX** գարավերջին Եղիպատում էին գրող և հրապարակախոս Սմբատ Բյուրար, գերասան-ըեմադրիներ թ. Ֆասույաճյանը, Ս. Պենկլյանի քույրերը, Հ. Ալիքսանյանը։ Տարերաւին վիճակում գտնվող համայնքի թատերական շարժումն այս արվեստագետների շնորհիվ է, որ կտղմակերպված բնույթ սահացավ, թ. Ֆասույաճյանը և Ս. Պենկլյանը, հտմածաճնվելով Սմբատ Բյուրատի առաջարկին, որոշեցին միավորվել՝ մշտապես գործող թատերախումբ ստեղծելու հեռանկարով։ Նրանց շուրջը համախմբվեցին համայնքի գրեթե բոլոր սիրող-դերասանները։ Խմբի առաջանար ուժերն էին Մարի և Եղվանդ Պենկլյանները<sup>5</sup>։ Ս. Պենկլյանի կինը և եղբորորդին։ Մրտգրերը մեծ էին, նպասակը՝ մեկը. վերականգնել «Արևելյան թատրոն», որն «ի Պոլիս կիայլեր երբեմն 40 տարիներ առաջանաւ այդպես էլ անվանեցին՝ Կոստանդնուպոլիսի հոշակավոր գերասանախմբին համահնչուն՝ «Արեվելյան նորակաղմ թատերախումբ» կամ, ի պատճիվ հիմնադիրների, «Պենկլյան-Ֆասույաճյան»։ Անդրանիկ ներկայացման համար թ. Ֆասույաճյանը ընարեց իր ինալացանկի հաջողվտծ դործերից մեկը՝ Վ. Հյուգուի «Առքայն դրունու» թատերախումբ։ Պիեսը ըեմադրվեց թուրքերեն (1900 թ. հունվարի 21-ին), պոլահայ թատերական միջտվայրում ընդունված կարդի համաձայն։ Ներկայացումն աննախադեպ հաջողություն ունեցավ, «Ֆասույաճյանի վերջին շողջողապես էր»<sup>6</sup>, — դրվեց այդ առթիվ։

Նորաստեղծ թատերախմբի երկրորդ «Շոն» Սեգար գր Բաղան» (Ֆ. Դյումանուար, Ա. Դենների) պիեսի ներկայացման հայտադրից, սակայն, կարելի է եղբակացնել հիասթափության և թատերական վերաբեռնումունքի մասին

3 Տե՛ս Ծարասան, Թրթահայ բեմը և իր գործիները (1850—1908), Կ. Պոլիս, 1914, էջ 56—57։

4 Ե. Մանտուլյան, Հուշեր և ինքնակենապություն լեղիշե Զարենցի տեսքան դրականության և արվեստի թանգարան, թատերական բաժնի հուշերի և աշխատությունների Ֆոնդ, թիվ 52, էջ 14։

5 Արշալույս, 10. II. 1900.

6 Նշան Պետքանական ան թատերական գեմքեր, Անթիկաս-Լիրանան, 1969, էջ 344։

միայն. «Սույն ներկայացման արածասովոր փայլ մը տալու համար, Արեելան թատերական խումբը, այս անդամ միացած է ամերիկյան հողակավոր խըմբին, որում պ. Զենթոյ կառաջնորդե»<sup>7</sup>: Հայասդրում նշվեց նաև, որ ամերիկյան խմբի հայանվելը նորակազմ թատերախումբը քաջալերելու, ներկայացումները ռէնտաքրքրական և գոհացուցիլ ըսելու համար»: Էր «Արդաշույս թերթում այս առիթով լույս աեսավ թ. Ֆասովյաճյանի սերկոն ներկայացումների վերջա խորադրով հորվածը, որը պարզաբանում է եղելովթյունը: Թատերախմբի հանդեպ վերաբերմունքն ակնհայտորեն փոխվել էր, որը հոդվածագիրը հակված էր բացատրելու անձամբ իր և դործնկերների դեմ նյութված ինտրիքներով և անբարյացակամ վերաբերմունքով: Մինչգեռ, համայնքում աճող աղղային դիմակցությունը նոր խնդիրներ էր թելադրում արվեստի բոլոր ճյուղերին և հատկապես թատրոնին, որի դոյաձաւման միակ նախապայմանը կարող էր լինել մայրենի լեղվով արվող, աղղային նկարագրով, ժողովրդին հուղող հարցերին առնչվող պիեսների բեմադրությունը: Թատերական դործիները պետք է «գաղթականության մեջ մեռնելու վտանգին ենթարկված լեզուն քիչ մը կենդանացնեն բեմեն, փոխանակ օտար լեզու մը անուղղակի պրոպագանդ ընելու»<sup>8</sup>: Օտար լեղվով արվող և աղղային կյանքից մեկուսացած պիեսների բեմադրությունն էր, որ դարձավ հակասությունների պատճառ, և ոչ թե «հայ գերասանին դեմ պատահած անիրավ ճնշումները և հարուցված անտանելի դժվարությունները»<sup>9</sup>, ինչպես հոդվածում գրում էր գերասանը: «Արեելյան թատերախմբից զեկավարներն, անկասկած, կուառում էին խմբի նկատմամբ հետաքրքրության նվազման բուն պատճառը: Այլապես նրանք չին դիմի Մյուրատ Բյուլատին, որը սահնձնել էր թատերագրի պարտականությունները՝ աղղային թատերախաղ զրելու խընդրանքով: Ամբատ Բյուլատը որոշեց մեկ անդամ ևս անդրադառնալ Վարդան Մամիկոնյանի և նրա զինակիցների հերոսական պատմությանը, որը պատճառարանված էր նաև Վարդանանց արթեդրձի մոաալուս տոնակատարությամբ: «Ավարայրի արծիվը կամ Վարդանանք»: Այսպես էր կոչվում նոր թատերախաղը, որը հեղնակը և բեմադրիչների մասհացմամբ պետք է լիներ «մի կոլոսալ ներկայացման» հիմք: Մեծ ուշագրություն հատկացվեց զանգվածային աեսարաններին: Գլխավոր հերոսը պետք է շոշապատված լիներ ողբքի, նախարարների, քրմերի մեծ րազմությամբ:

Եղիպատահայ հանդիսաւոն անհամեցերությամբ էր սպասում «Վարդանանք» ներկայացմանը: 1900 թ. մարտի 2-ին Եղիպատական թատրոնում կայացած ներկայացումն իսկապես երեսով դարձավ համայնքի մշակութային կյանքում, միաձուվելով համաժողովական տոնին»<sup>11</sup>:

Թվում է, ճիշտ ուղին դտնված էր, և գերասամախումը պետք է վեռանայեր իր խաղացանկն ու խաղառնքը: Մինչգեռ, «Վարդանանքին» հաշորդեց ժամանակավեպ պիեսների ամբողջ մի շարք: «Խելազար կինը», «Կարմիր կամրջի ոճիրո», «Փարիզի հնավաճառը», «Մոմե արձանադրձը», բոլըն էլ՝ թուրքերեն: Խմբի անուրանայի հաջողությունն էր 1900 թ. ապրիլի 7-ին խոհիվական թատրոնում կայացած Շեքսպիրի «Օթելլո» ողբերգության ներկայացումը, որը դրավեց նաև անդիհացի թատերասերների ուշագրությունը»<sup>12</sup>: Թատերախմբի հետաղ դործունելությունը, սակայն, դարձավ անհնար՝ երկու գերասանապետների հիվանդովթյան պատճառով: Երկուսն էլ կյանքից հեռա-

7 Արշալույս, 31. I. 1900.

8 Նույն աեղում:

9 Արակմիս, 1903, թիվ 4—5, էջ 135:

10 Արշալույս, 10. II. 1900:

11 և. Սա և ու ալջան, Հովհեր... էջ 33:

12 Տե՛ս Արշալույս, 11. IV. 1909:

ցան գրեթե միաժամանակ՝ 1901 թ., դեռասանախմբի հիմնադրումից լնդամենը մեկ տարի անց: Այս կարճաակ դոյլությունն անդամ, որն իրենք՝ արվեստագեանեղու համարում էին հանիրավի շգնահատված, ժամանակի ընթացքում իմաստավորվեց, իր հետքը թողնելով եգիպտահայ թատրոնի զարգացման վրա: «Պենկլան-Ֆատուլյան» թատերախումբը դարձավ պրոֆեսիոնալ խմբի օրինակ, արվեստի փայլուն դպրոց՝ տեղի գերասանների համար: Թատերախմբում իրենց մկրտությունը ստացան և լուսն Շիշմանյանը, Ծննիկ Վոլուերը, Շավարշ Շիշմանյանը, Խաչիկ Նորիկյանը և այլք, արվեստագետներ, որոնք հետագայում կաղմեցին եգիպտահայ թատրոնի ընարանին: Խմբի ներկայացրած «Ավարայրի տրծիվը կամ Վարդանանք» ողբերդությունը, որը դարձավ նաև եգիպտահայ թատերագրության սկիզբը, տեղի թասրոնի գոյության ընթացքում գրեթե չիշավ բեմահարթակից: Բազմիցս բեմադրվելով Վարդանանց տոնի առթիվ, այն ամրապնդել է տեղի հայության հայրենասիրական ոգին, նպաստելով պատմական անցյալին նվիրված այլ թատերախմբերի բեմադրությանը:

Դարասկզբին եգիպտահայ համայնքում գործում էր նաև «Ակմոնոֆ» թատերախմբը, որի խաղացանկում, թուրքերենով արվող ներկայացումներից բացի, ընգգրկված էին նաև աղքային թեմաներով հայտեղու ներկայացումներ: Խմբի հիմնական գերասանական ուժերն էին Տիրուհի և Գեորգ Սիմոնովները: Տարրեց ներկայացումներին մասնակցել են Վահան Պապտյանը, Վ. Քյուշիկյանը, Վարդապետյանը և այլք: Թատերախումբը գերում էր իր կենդանի խաղաղով, մայրենի լեղվով տրվող ներկայացումներով: Դերասանական այս խոսքն առաջինն էր, որ հրաժարվեց պոլարիզայ թատրոնի գործածքից: Այդ շրջանում Կահիրեւում և Ալեքսանդրիայում ստեղծվեցին տարրեր թատերախմբեր, ասպարեզ իշան թատերական գործիչներ, որոնք ձգառում էին գտնել իրենց՝ եգիպտահայ թատրոնին հասուր խաղաղությունը: Դրանք «Բաֆֆի» հայ պատանյաց ընկերությունն և «Փայլակ» թատերախմբերն էին: Նորաստեղծ խմբերի բավարար գործունեության համար լուրջ խոշնդությունը էր դերասանութիւնների բացակայությունը: «Այս տեսակետով, — գրում է «Հուսարեր» թերթը, — 40—50 աարի մը ետ գացած ըլլալ կթվինք բեմակտն աարեդրությանց մեջ»<sup>13</sup>: Թատերական գործիչների այս ներկայական պատճառով էր, որ Եգիպտասում բնակություն հաստատած երվանդ Օտյանը գրեց «Զավալլա» վորակիլը, որտեղ կնոջ կերպարն իսպառ բացակայում է: Պըմիկերան տեղի ունեցավ 1905 թ. գեկտեմբերին, Ալեքսանդրիայի էտյեն թատրոնուամ, դերասաններ և Շիշմանյանի, ի. Քերոբյանի, Ս. Մաղաքյանի մասնակցությամբ: Երեկոյի ընթացքում արտասանվեցին նաև Պեարու Դուրյանի ռանաստեղծությունները, և Շիշմանյանը կատարեց Օտյանի մենախոսություններից մեկը: Սակայն հայերեն արված ներկայացումը գարձավ երեկոյի «զինավոր հրապուրը»<sup>14</sup>, Երվանդ Օտյանի այս թատերախառի շնորհիվ էր, որ բացահայավեց և լուսն Շիշմանյանի՝ կաասակերպակ գերասանի, անուրանալի օժտվծությունը: Վերջինիս այս ունակություններն էին Օտյանին մղել Միքայել Կյուրցյանի համագործակցությամբ գրելու «Զարշըլը Արթին աղա կամ ֆրանկո-թրքական պատերազմ» կատակերգությունը, որա գիխավոր՝ Արթին աղայի գերը հատկապես Շիշմանյանին հանձնելու նպատակով: Պիեսի առաջին ներկայացումը աեղի է ունեցել 1903 թ., Ալեքսանդրիայում: «Ազատ բեմը» և Շիշմանյանի խաղի մասին արգեն 1905 թ. Պիերամիգ թատրոնի ներկայացման առիթով գրում է. Տ. Լ. Շիշմանյան ինքինք գերտղանցեց Արթին աղայի դերին մեջ, ամբողջ խաղին ընթացքին ծափեր ու ծիծաղներ խլելով հանդիսականներեն. կարելի է ըսել, որ Արթին աղայի դերը Շիշմանյանի պատերազմի ժին է, որուն վրա անմրցելի աետի մնաց<sup>15</sup>: Հիրավի, իր երկա-

<sup>13</sup> Լուսարեր, 16. XII. 1905.

<sup>14</sup> Նույն ռեզում:

<sup>15</sup> Ազատ բեմ, 16. IX. 1905.

բամյա դործունեսության ընթացքում կ. Շիշմանյանը մնաց որպես Արքին աղայի անդերազանցելի դիրքակատար, 1909 թ. փետրվարին՝ նա հրավիրվեց Կոստանդնուպոլիս, մասնակցելու «Աղայա թատրոնի» ձեռնարկած «Զարգււե Արքին աղայի» բեմադրությանը<sup>16</sup>. Փետրվարի 15-ին, 22-ին և 23-ին ներկայացումը հաջողությամբ անցավ Կոստանդնուպոլսի Շահղադե և Վարիետե թատրոններում:

Դարձակղրի եղիպահաճայ թատրոնին բնորոշ է այն, որ սիրող-զերասանների կողքին ասպարեզ իշան պըռդեսարոնալ մակարդակի թատերական ուժերու կ. Շշշմանյանից րացի, այդ տարիներին աչքի ընկավ նաև Հովհ. Գալֆայանը (Օննիկ Վոլահեր), 1904 թ. Գալֆայանի դերասանական կյանքում տեղի ունեցավ կարեռ փրադարձություն. սիրողական և հյուրախաղային թատերախաղմբերում ունեցած համեստ մասնակցությունից նա անցավ շեքսպիրյան պիեսների՝ «Օթելոյի» և «Համլետի» րեմադրությանը Մի քայլ, որը սկսնակներին, որպես կանոն, դատապարագում է անհաջողության, ոմներ իր տրամարանությունը. Գալֆայանը եղել է պկոմեդի ֆրանսեղին ներկայացումների ականատեսը, և, Հավանաբար, նաև փորձերի մասնակիցը, այսպես չեր եարող ստանալ Փարիզի կոնսերվատորիայի անօրեն Սիլվենի սոորագրությամբ մի վկայագիր, որտեղ նա բնութագրվում է որպես ճշշմարիտ արվեստագետ մը ջնող թանկադին ձիրքերաց<sup>17</sup> ունեցող դերասան։ Մեր այս ենթադրությունը հաստատում է թատերախոսներից մեկի կարծիքը Գալֆայանի քեմական խոսքի մասին, որը «Սունեի և Սիլվենի դպրոցին հետեղողությամբ՝ որ արձակին քեմական ակադեմիան կնկատվի իրավամբ, հստակ, զանդառ և իմաստին ուժին համեմատ է»<sup>18</sup>, Նշենք նաև, որ հետաքրքրությունը շեքսպիրան թատերադրության նկատմամբ տարիների ընթացքում պքեց դերասանին, 1907 թ. նա մեկնում է Անգլիա, որ «կենտեկի Շեքսպիրի դպրոցին»<sup>19</sup>, Մինչ այդ, փարիզյան դերասանների շնորհիվ շշեքսպիրյան դպրոցը անցած Գալֆայանը բավարար էր համարել սեփական քեմադրություններով (ուր իրեն էին հասկացվում գլխավոր դերերը) հանդես դայր:

1904 թ. ապրիլին, Ապտ-էլ-Աղիք թատրոնում աեղի ունեցավ «Օթելլո» ողբերգության ներկայացումը, Փասան ինքնին արտառոց է՝ զառնալով թատերասեր հասարակայնության ուշադրության առարկա: «Աղատ ընմում» տպապրված հոդվածը աալիս է դրա ընդարձակ վերլուծությունը, ընդհամակր առմամբ բացասարար դնահատելով թեմադրությունը: Հոդվածադիրն այն կարծիքին էր, որ նման ձեռնարկի համար Գալֆայանը չուներ և ոչ մի նախադրյալ, ոչ դիրասանական և ոեժիսորական փորձ, ոչ համապատասխան իւղղնկերներ և ոչ էլ պատրաստված հանդիսաաես: Այսուհեն դեռձ, «Գալֆայան Համլետի մեջ շատ ավելի հաջող պետք է որ ըլլա: Արդեն եթե իր աեղը ըլլայի, ես Համլետով յեմ կուդայի առաջին անդամա՞ց<sup>20</sup>, Ամենսկին շվասամկելով անհաջողությունից, Հովհ. Գալֆայանը ձեռնարկեց «Համլետի» ըեմագործությունը: Պանիհական իջևանի խոհական կերպարը, ըստ երեսութիւն, ավելի մոտ էր նրա արտիստական նախահիրություններին: Պատելով այս ներկայացման առիթով նույն «Աղատ թեմում» տպապրված հոդվածից, Հովհ. Գալֆայանին հաջողվեց դտնել հանդուցային աեսարանների որշտ լուծմուն<sup>21</sup>,

Հավանարար, պիշտ չէր լինի ասել, որ երիտասարդ մի դերասան, ձախողելով շեքսափուան մի ներկայացում, մեկ ուրիշում կառուածար հասնել

18 *Skrift. Tbilavik.*, 21. II. 1899. f. 72:

17. Ապրիլ. 23. IV. 1904.

18 ՆԵՐԴԻՆ ՄԻՒՐԱՅԻ

**19** *Рукопись Ивановской публичной библиотеки. № 1827. л. 182-*

20 П-рим. 111 22 IX 1924

20 Ազատ բնաւ, 21

Հաջողության և նույնիսկ ռշաա մոաենալ ամենամեծ արվեստադետներու աաղանդին<sup>22</sup>, Այս երկու բեմագրություններն առիթ եղան Շեքսպիրի սաեղծագործությանը կրկն անգրադասնալու, գրա շուրջը մաքեր փոխանակելու, իորհելու համար Դրանք անհետևանք շանցան իրենց իսկ՝ զերասանների համար ևս Կարճ ժամանակ անց Հովհաննեսին ու նրա խաղը ակերպներին վիճակվելու էր նույն բեմատարթակի վրա արժանիորեն հանդես դալու Հովհաննեսի և Հովհաննի կողմին: Գալֆայանի ներկայացումները, ինչպես նաև համայնքում ժամանակած թաաերական շարժումն իր տարաբնույթ գրսեորումներու մշակութային միությունների, ուսանողական թաաերախմբերի և անհաա գերասանների դործունեաությամբ, կարելի է բնութագրել որպես յուրօրինակ մի նախապատրաստաություն՝ հյուրախաղային պրոֆեսիոնալ թաաերախմբերի հետ համադրծակցության համար, որից հետո միայն աեղի թաաերական կյանքը ստացավ տրամարասորեն կաղմավորված նեա-րագիր:

1906 թ. ամուն ամիսներին Եգիպտաոս այցելեց Արշակ Պենկլյանի ղեկավարած «Վեսելու» թատերտիումը: Երկու տարվա ընթացքում խումբը ելույթ ունեցավ տարրեր ընդմիջումներով, հանդիսատեսի հեա յուրաքանչյուր նոր հանգիպմանը ձգաելով ներկայանալ դրեթե ամբողջումին վերափոխված փաացանկով: Մշաական որոնումները բարերար աղդեցություն թողեցին նաև համայնքի թաաերական միջավայրում: Զդալիորեն ջընջվեց եկոր և աեղի սիրողակտն խմբերը բաժանող անջրագեաը: Սովորական դարձան «Բաֆֆի» պատանեկան և «Վեսելու» թտերախմբերի համաաեղ բեմադրությունները: Խումբը ի վերջո նպաստեց համայնքի թաաերական շարժման ամրապնդմանը, հեաադայում արածում գտած կատակերգական ժանըի և իւաղաոծի ձևավորմանը, զերասանական ուժերի նորովի դրամորմանը:

«Վեսելու» թաաերախմբը հեա գրեթե միաժամանակ՝ 1906 թ. սեպտեմբերին, Եգիպտաոսում էր գտնվում նաև Արմեն Արմենյան (Իփեկյան) և Եկաաերինա Դուրյան-Արմենյան գերասանական դուզգոր: Համայնքում անհամբերությամբ էին սպասում արևելահայ թաարունի այդ նշանավոր ներկայացուցիչներին, մանավանդ որ Իփեկյան աղջանունը քաջ հայանի էր տեղի ինչպես թաաերասեր, այնպես էլ դորժարար շրջաններում: Տարածայնությունների, նույնիսկ վիճաբանությունների առիթ տվեց գերասանների ընտրած խաղացանկը, որում զերակշուում էին կնոջ աղատադրման հարցն արժարծող ազգային և արևմատական թաաերգության նորագույն գործեր (Է. Տերդիկորյան՝ «Դամոկլյան սուր», Ա. Շիրվանղաղեն՝ «Եվգինիե», Հ. իրսեն՝ «Ուրվականներ», Ա. դը Մյուսեն՝ «Վաղաժամ վճիռ», Պ. Հերվիեն՝ «Ճիրամններ», Հ. Զուգերման՝ «Ֆրիցխեն» և այլ թաաերախմբեր): Եկաաերինա Դուրյան-Արմենյանի հերոսութիները, որոնք ընաանեկան հարաբերությունների ավանդական դրվագների գեմ պայքարող, ուժեղ և կամային կանայք էին, աեղի հանգիստեաին խորթ էին ու անսովոր: Դա միանդամայն ընական է: Հիշենք, որ այս կարգի դործերը դժվարությամբ ընդունվեցին նաև արևմտաեկորպական բեմարթակներում, նման ճակտուագրից չխուսափեց նաև Շիրվանղաղեի «Ունե՞ր իրավունք» գրաման: Արմենյանն ինքը հանդեց այն համոզման, որ առավելություն աայով իր նախասիրած գործերին, հաղվի շառակ աեղի հանդիսատեսի սովորութիներն ու գեղագիտական հակումները: Ուսաի, «Ճիրամններ» պիեսի ներկայացումիո հետո, նախօրոք հայաարարված «Վաղաժամ» վճիռի փոխարեն բեմադրվեց Հ. Պարոնյանի «Պաղաասաը ադրաբը»:

Կտրճ ժամանակամիջոցում Արմենյաններին հաջողվեց միմյանցից միանգամայն տարբեր, մտրգկատյին հառաբերություններում նույնիսկ չու այնքան հաշա, խայաարդեա գերասաններից սաեղծել համախմբ-գործընկերներից կաղմված համերաշխ և կարդապահ մի թաաերախմբումը: Արեելահայ գե-

22 Ազատ բեմ, 14. Վ. 1904:

րասանների շուրջ համախմբվեցին Պայծառ Յասովյաճյանը, Տիդրան Հաճնլզանը, Տ. Բելլերյանը, Վ. Տեր-Հակոբյանը, Օ. Չայանը և այլք, Արմեն Արսենյանն իր նոր խաղընկերների համատում էր երեխի եռանդով, Ամենօրյա վորձերը, որոնք անցնում էին գերասանական վարպետության ներքնահարկում, հաճախ վերածվում էին գերասանական վարպետության սվիրված դաստիոսությունների, նույնիսկ ներկայացման ժամանակ, հաճախ ի մտս սեփական դերակասարման, Արմենյանը չէր մոռանում իր ոեժիսուրտկան պարատկանությունների մտսին. մեկ անդամ ես ստուդելով դերասանների հարդարանքը, օգնում էր նրանց իր դիառողություններով և խորհուրդներով:

Շուրջ ինն ամիսների ընթացքում (Արմենյանների վերջին ներկայացումը աեղի ունեցավ 1907 թ. ապրիլի 12-ին, Կահիրեի Վերդի թատրոնում) Արմենյան դերասանները, եղիպտանայ թատրոնական անձանթ և արդիական պիեսներ ներկայացնելուց բացի, արդյունավետ աշխատեցին սիրողական արվեստ զարդացնելու ուղղությունը, նպաստելով նաև հանդիսատեսի թատրոնական դիտության կաղմանությանը: Ընդլայնվեցին թատրոնի մասին նրա պատկերացումները: Հնարք կամ թուրքական բարգերին հարմարեցված, շշատ անդամ անիմասա և միշտ անարվեստ թատրոնախալղերը<sup>23</sup>, որոնց հաջողությունը հաճախ դնահատվում էր ծիծաղի կամ արցոնքի շափով, Արմենյաններից հետո թվում էին անհարիր: Զուգահեռ ներկայացումներով հտնդես եկող ռվեսելու թատերախմբի վրա անդամ տարածվեցին այս տրամադրությունները, տեղիք աալով «Աղոտա խոսքի» հարձակողական հոդվածներին: Արմենյանների շնորհիվ եղիպտահայ թատրոնական դործիշները, կարծես, թոթափեցին այն անտեսանելի կապանքները, որոնք մինչ այդ կաշկանդում էին իրենց: «Էլուսաբեր» թերթում հրապարակվեց «Մյուս ճիրանները» խորադրով մի հոդված («Ճիրանները ներկայացումից հետո»), որտեղ մասնավորապես ասվում է. «Քանի շաբաթի ի վեր է, որ թտորոնի վրա կլսուինք, արվեստը կմեծարենք, արվեստագեանները կդրվատենք կամ կքննադատենք, Զյուգերմանի և Էրվիեռի անունները կլսենք: Դեղարվեստական զարթնում, զոր նովկտսի պարտական ենք. ե մեր «հետավոր եղանաց» անսահմանորեն շնորհապարտ պիտի մնանք, եթե մեղի ասանք քաղցրահոնչ արվեստադետներ խրկեն...»<sup>24</sup>: Հոդվածադրի տյս խոսքերն ուղղակիորեն հակադրվում են Արևելյան Հայաստանի մշակութի մասին տիրող այն կարծիքին, ըստ որի, արվեստը, գրտկանությունը, դութե անտեսավում էին երկրի հասարակական կյանքում: Բայց չէ՞ որ միայն թատրոնի ասպարեզում կային բաղում օրինակներ, որոնք ապացուցում էին հտկուակը: Հենց աեղի մտավորականներից շատերի խոստովանությամբ, արեմտահայ ըեմի փայլում ներկայացուցիչները՝ Թետրոս Ադամյանը, Սիրանուցը, Ազնիվ Հրաշյան, «իրենց հողակին հաստատությունը ընդունած են Ռուսասան և թե՛ անոնք իսկ որ հոն շգացած վարպեաներ էին արդեն, ավելի կատարելադորձված վերադարձած են հոնկեն»<sup>25</sup>: Արմենյան դերասանական դուլդն, այսպիսով, ընելով Արեելյան Հայաստանի մշակութի առաջին ներկայացնողը եղիպտահայ համայնքում, կարողացավ հետաքրքրություն և համակրանք առաջացնել դեպի հայ ժողովրդի այդ հատվածի մշակութն ու թատրոնը, որն անհետեանք շանցավ տեղի թատերական շարժման համար: Որոշ ժամանակ անց (1925) «Եղիպտահայ գրամաահկ» թատրոնախումբը Ծնիկ Վոլտերի ողեկավարդիթյումք ըեմաղրեց ի. Տեր-Գրիգորյանի ոՒամոկւան սուրբը, իսկ Արմեն Արմենյանի եղբայր Գասպար Իփեկյանը համայնքի թատրոնական հասարակաբնության ուղագրությանը ներկայացրեց

<sup>23</sup> Ազատ խոսք, 17. XI. 1906:

<sup>24</sup> Լուսաբեր, 30. IV. 1907.

<sup>25</sup> Լուսաբեր, 1. I. 1907,

Եիրվանդակեի և Արմենուհի պիեսի բեմագրությունը, Վերշինիս աշխատանքիս մասնակցում էր նաև մեծանուն թատերագիրը:

Արշակ Պենկյանից և Արմենյաններից հետո եգիպտահայ բեմը թվում էր ամայացած, Տեղի թատերական ուժերը, որոնք աշխատանում էին դրսց եկած արվեստադեսների ներկայությամբ, կարծես, կորցնում էին կողմնորոշվելու ունակությունը նրանց մեկնումից հետո: Պատճառն, անշուշտ, տվանգույթների չեռևս չհաստաված լինելն էր, որի հետևտնքով էլ թաաերական կյանքը՝ հասական բեռն ընկառու էր ուկոր դերասանների ուսերին: Մինչեռ, արդեն հասունացել էր մշտական թատերախումբ սաեղծելու հառցը, Խացի այդ, թաարոնի շուրջը, իսկական արվեստագետների կողքին սկսեցին հավաքվել բախտահինդիք մարդիկ, որոնք կասեցնում էին առաջատար ուժերի միավորումը, և որուցից ազատվելու խնդիրը դառնում էր անհրաժեշտություն, Խատերական մթնոլորտում իշխում էր ստեղծված իրադրությունից դրւուր գալու գիտակցումը, երր հայտնի դարձավ, որ տասներկուամյա ընդմիջումից հետո Եգիպտոս էր ժամանելու Սիրանույշը, Կովկասյան հայ դրամատիկական խմբի ուղեկցությամբ: Սիրանույշի ներկայացումները, որոնք պետք է տեղի ունենային Կահիրեի Վերդի թաարոնում, սկսվեցին 1907 թ. գեկտեմբերի 16-ին, Վ. Սարդուի «Տուսկայուվ»: Հաջողությունը մեծ էր: Մամուլն արձագանքեց հիացական հոդվածներով: Ընդհանուր առմակրում բարձր էր գնահաավում դերասաններից յուրաքանչյուրի խաղը, խումբը գիտվում էր որպես «ինքնագիտակից ամբողջական խումբ», իսկ Վահան Թեքեյանը օգսագործեց «անսամբլ» տերմինը, «ինչպես թիֆլիսի թատերական քննադատները կըսեն»<sup>26</sup>: Այսպիսով, Սիրանույշը, որը չէր համակրում Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի նորագույն սկզբունքները, «չէր կարողանում և չէր կամենում ըմբռնել գեղարվեստական անսամբլի նորագույն պահանջը»<sup>27</sup>, իր իսկ կամքին հակառակ, դարձավ այս սկզբունքի շաաագով: Մոլորություն կլիներ ենթադրել, որ այնափակի խորաթափանց արվեստագետներ, ինչպիսիք էին Վահան Մալեղյանը և Վահան Թեքեյանը, անտեղյակ էին գերասանուու գեղագիտական նախասիրություններին: Մակայն միայն այն փաստը, որ Սիրանույշը եկավ Եգիպտոս նախօրոք ընտրված մի խմբով, որի կաղմում ընդգրկված յուրաքանչյուր գերասանի խնդիրը ու թե ստորագասվում, այլ, ընդհակառակը՝ համարում էր կենտրոնական կերպարին, մի՞թե չի վկայում այն մասին, որ Սիրանույշն ինքը, հակագրվելով՝ «միայնակ ողբերգակների» իր իսկ սկզբունքին, որոշ առումով ստեղծեց նախադրյալներ անսամբլային գերակատարման համար: Այսպիսով, Եգիպտահայ համգիսատեսը հնարագորություն ստացավ ու միայն ականատեսը լինելու գերասանական փայլուն կատարման, այլի՛ որոշակի գաղափար կաղմելու թատերական նորագույն ուղղությունների մասին:

Երկու տարի անընդմեց, (1906—1908) Եգիպտահայ բեմը տրամագրվեց արեամտահայ և արևելահայ թատրոնի ակնառու ներկայացուցիչներին: Նրանցից յուրաքանչյուրը՝ Սիրանույշը, Արմեն Արմենյանը, Եկաաերինա Դուրյան-Արմենյանը, Արշակ Պենկյանը, արտիստական վառ անհատականություն էր, թատերական ամբողջ մի ուղղության կրող, և նրանց ներգործությունը պետք է որ անմիջականորեն անդրագանուար Եգիպտահայ թատերական շարժման հետագա ընթացքի վրա: Մինչեռ, Արանույշը և Կովկասյան հար գրամատիկական խմբի մեկնումից հետո էլ Եգիպտահայ բեմում նկատելի տեղաշարժեր չեղան: Մամուկում, ինչպես և 1900-ական թվականներին, կարելի է հանդիպել միայն ծանոթ ներկայացումների վերնագրերի: «Վարդանանք», «Արշակ Բ», «Ակ հողեր», «Սանգուխտ կույս» և համանման այլ գործեր: Միօրինակություն, որը խախավեց 1910 թ. Արշակ Ծանպետենյանի «Արևելյան» թատերախմբի երևան գալով, Բայց սա ևս հերթական, բնավ ու առաջ-

26 Խուարեր, 28. XII. 1907.

27 Լ. Հախվերդյան, Հայ թատրոնի պատմություն (1901—1920), Երևան, 1980, էջ 86.

նակարգ հյուրեկ մի թատերախումբ էր, որն ավելի ցայտուն գարձրեց այն իրավիճակը, երբ բեմական պահվածք ունեցող զերասանն իսկ հայտնություն էր; Մամուլում չէին երեւմ անդամ այն համարձակ թատերախոսականները, որոնց կարել էր հանդիպել մինչ Սիրանուշի գալր; «Արշալույս» թերթը նույնիսկ խոստովանեց, որ ավելորդ է համարել «Արեելան» դերասանախմբի ներկայացման առիթով իր աշխատակցի «քրոնիկի» տպագրումը, անկատելով որ Եղիպատոփի հայկական ըեմը «քրոնիկ» հիվանդության մատնված է և անքուժելի է...»<sup>28</sup>; Հիշենք, որ այս տիտուր իրողությունը պայմանավորված է XX դ. առաջին տասնամյակին աիրող քաղաքական մի իրադրությամբ, երբ մշակութային գործունեության ամեն մի դրսերում գարձավ գրեթե անհնարին; Շարունակվում էին հայկական կոտորածները, Այս ամենը չէր կարող չուղել Եղիպատոսում ապրող հայերին; Համայնքուած ծավալվեց Կիլիկիայի, Աղանայի, Արարկիրի հայրենակիցներին օգնելու մի շարժում, որտեղ Խառարական ներկայացումները դարձան այդ շարժումը ղեկավարող «Հայկական քարեգործական», «Աղքատախնամ», «Որրախնամ» և այլ ընկերությունների բարեգործական միջոցառումների օժանդակ օղակներից մեկը Այդ իսկ պատճառվ, նպատակահարմար գարձավ ծանոթ թատերախաղերի բեմագրությունը, երբ ներկայացումից սաացվող հասուլթը գարձավ ղեղագիտական արժեքից կարեռ, Մամուլում էլ, լայնածավալ թատերախոսականների փոխարեն, տապագրվուած էին ներկայացումներից ստացվող հասուլթի մասին կարճ հաղորդագրություններ:

Եղիպատահայ համայնքն ինքը գտնվում էր լորված իրավիճակում, որը պայմանավորված էր աճող ներկուսակցական պայքարով; Հասարակական-քաղաքական տեղաշարժերը մղում էին դեպի ժողովրդական հոսանքների լրիվ տարանջատումը և դրանց միջին եղած հակասությունների բացահայտումը; Այդ պայմաններում արվեստի բոլոր ճյուղերը, որոնք ունեին զարգացման նախադրյաներ, անկում ապրեցին, Օսմանյան սահմանագրության պարփած «թղթե աղատության» զոհ գարծով նաև գուականությունը; Ստեղծվեց «Կենդ հերոսների կեղծ գրականություն»՝ ասպարեզը ողողելով ցածրուակ գրքույների մի իսկական աարտիով; Այսուհանգերձ, գրականությունն էր այն միակ ասպարեզը, որը, պահպանելով իր կենսունակությունը, ի վհճակի եղավ արձագանքելու կատարվող դեպքերին, տալու ժամանակի և իրականության գատակնիքը; Ամբողջ 1909 թ. ընթացքում եղիպատահայ մամուլի էշերը տրամադրվեցին Կիլիկիայի շարաշուր դեպքերին արձագանքող նյութերն; Հորվածների հեղինակներն էին Վահան Մալեղյանը, Միհրան Տամատյանը, Միքայել Կյուրճյանը, Միքայել Նաթանյանը և արեմաահայ մշակուլթի այլ նշանակուր գործիչներ; Սկիզբ առաջ դրականության մի նոր որակ, որը, ինչպես և Կիլիկիայի աղեաը, սաացավ ատիսուր, արյունուա գրականությունն անվանումը, Թատընը և նրա հետ կապվող ինդիրները մղվեցին հետիւն:

Այսպիսով, գարասկզբին եղիպատահայ թատրոնը, ունենալով առաջընթաց կատարելու նախապայմաններ, կանգնեց փակուղու առջե, որից գուրս դալու հնարավոր ճանապարհը ստեղծված աղգային-հասարակական իրադրության փոփոխությունն էր:

## ИЗ ИСТОРИИ ФОРМИРОВАНИЯ АРМЯНСКОГО ТЕАТРА В ЕГИПТЕ

А. Г. ЧТАН

### Р е з ю м е

Крупные мастера сценического искусства Западной и Восточной Армении часто приезжали на гастроли в Египет, оказывая таким образом воздействие на процесс формирования и развития театрального искусства египетской армянской общины. Общение со знаменитыми мастерами армянской сцены не только способствовало подъему общего сценического уровня и формирующейся театральной мысли, но и приобщало актеров к новым сценическим течениям и стилям, зарождавшимся, в частности, в Восточной Армении.